

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Աստղիկ Գրատուն ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/67 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	Հայաստանի Հանրապետություն	<p>Մարմնամարզական նստարան - Մարմնամարզության նստարանը հավաքովի գույք է, որը բաղկացած է նստելատեղից, տակամասի փոփոխելի մետաղական ոտքերից և հենակից: Նստելատեղը և տակամասը փոփոխելի պետք է պատրաստված լինեն հատուկ մշակում անցած սոճու կամ խեժափիճի կամ փշատերև այլ ծառերի փայտից, պարագծի շուրջը և նստարանի անկյունները պետք է լինեն կլորացված: Մարմնամարզական նստարանի մակերեսը պետք է լինի խնամքով հղկված բարձրորակ խոնավակայուն և չսահող երկու շերտով պատված բարձրորակ երեք բաղադրիչ անգույն լաքով: Նստելատեղի չափերն են՝ 3000մմ երկարություն, 300 մմ լայնություն և 40մմ հաստություն: Տակամասի փոփոխելի չափերն են՝ 2600մմ երկարություն, 100 մմ լայնություն և 37-40 մմ հաստություն: Նստարանի մետաղական ոտքերը պետք է հնարավորություն տան ունենալ 300 մմ բարձրություն, ունենան փակ շղթայանման կառուցվածք, ոտքերի բարձրությունը մեխանիկական եղանակով կարգավորելու հնարավորությամբ: Նստարանի մետաղական ոտքերը և հենակը պետք է պատրաստված լինեն 30x30x2,0 մմ մետաղական քառակուսի խողովակից, միացումները՝ զոդման եղանակով, զոդման կարանները պետք է լինեն հղկված,փոշեներկված բարձրակարգ մուգ մոխրագույն փոստրացիտ ներկանյութով: Մետաղական կառուցվածքը միացվում է միջանցիկ հեղուսե</p>

մանեկային ամրացումով: Նստատեղի կողմից հեղյուսը պետք է լինի ողորկ, իսկ եզրերը՝  
նստատեղի հարթության վրա: Մինչ մատակարարումը՝ ապրանքի նմուշը նախապես  
համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Նշված ապրանքի համար երաշխիքային ժամկետ  
սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից,  
երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված  
ողջամիտ ժամկետում պետք է շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել  
նորով: Չափաբաժնում նշված ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը  
 $\pm 3\%$ : Նշված ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Տեղափոխումը,  
բեռնաթափումը, տեղադրումը և հավաքումը՝ ըստ հասցեների իրականացվում է  
Մատակարարի կողմից: Մինչև մատակարարումը ներկայացված ապրանքի նմուշները  
համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի  
հետ: Պայմանագրի կատարման փուլում չափաբաժնով ձեռքբերվող ապրանքների  
պատրաստման ընթացքում օգտագործվող հիմնական նյութերի համար պարտադիր է  
ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ  
համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը:





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

Астхик Гратун ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом 22400000000000000000-24/67 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
2		